



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2013թ. թիվ 12-Ա

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄ
ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 281-Ն որոշումը և ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 26.09.2012թ. թիվ 01/17/4978-12 հանձնարարականը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Ստեղծել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմ (այսուհետ՝ ԱՌՆ մարզային թիմ):
2. Հաստատել ԱՌՆ մարզային թիմի կազմը՝ ի պաշտոնե սկզբունքով, համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել ԱՌՆ մարզային թիմի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Լիազորել ԱՌՆ մարզային թիմին.
 - 1) ապահովելու նպաստավոր միջավայր աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության և Հյոգոյի գործողությունների ծրագրի առավել արդյունավետ իրականացման նպատակով,
 - 2) ներկայացնելու աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում, մասնակցային եղանակով որոշելու լուծման ճանապարհները և հետամուտ լինելու դրանց իրականացմանը,

- 3) նպաստելու և օժանդակելու աղետների ռիսկի նվազեցման գործառույթների իրականացմանը մարզային ու համայնքային մակարդակներում:
5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
6. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Լոռու մարզում աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմ ստեղծելու մասին» թիվ 221-Ա որոշումը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
2013թ. հունվարի 29
ք.Վանաձոր

A. Շահան

Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ